

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ**

Ստուգաթերթ N 44

Մաքրման աշխատանքներ Ոչ վնասակար թափոնների հավաքում

(ՏԳՏԴ ծածկագիր՝ 81.2, 38.11.0)

_____	_____	_____
(տեսչության տարածքային մարմնի անվանումը)	(գտնվելու վայրը)	(հեռախոսահամարը)
_____	_____	_____
(ստուգող անձի պաշտոնը)	(ազգանունը, անունը, հայրանունը)	
_____	_____	_____
(ստուգող անձի պաշտոնը)	(ազգանունը, անունը, հայրանունը)	
_____	_____	_____
(ստուգող անձի պաշտոնը)	(ազգանունը, անունը, հայրանունը)	

Ստուգման սկիզբը (ամսաթիվը) _____ ավարտը՝ _____

_____	_____
(տնտեսավարող սուբյեկտի անվանումը)	(ՀՎՀՀ-ն)
_____	_____
(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը)	(հեռախոսահամարը)
_____	_____
(տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը)	(հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____ երբ է տրված _____

Ստուգման նպատակը /Ընդգրկված հարցերի համարներ _____

N	Հարց	այո	ոչ	չ/այ	Կշիռ	հղում	Ստուգման մեթոդ	Մեկնաբանություն
1.	Ոչ վնասակար թափոնների հավաքումը՝ սպառման թափոնների փոխադրումը (աղբահանությունը) իրականացնում են համաձայն աղբահանության սխեմաների:				3	Հղում 1. Կետ 15	փաստաթղթային	
2.	Աղբահանության սխեմաները և ժամանակացույցը կազմված են ապահովելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» N 1161-Ն որոշմամբ սահմանված սպառման թափոնների հեռացման հաճախականությունը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ: Նշում՝ 1				3	Հղում 1. Կետ 15	տեսողական	
3.	Կոնտեյներները՝ Նշում՝ 2						տեսողական	
3.1	ունեն կափարիչներ:				2	Հղում 1. կետեր 11		
3.2	հեշտությամբ նույնականացվում են և պարունակում են աղբահանության ընկերության հասցեն կամ անվանումը կամ ծածկագիրը:				1	Հղում 1. կետեր 12		
3.3	ունեն մաքրման և ախտահանման ենթակա հարթ մակերեսներ:				3	Հղում 1. կետեր 12		
4.	Հանգստի գոտիներում, լողափերում կոնտեյներները տեղադրված են 3500-4000մ ² մակերեսին 1 կոնտեյների հաշվարկով:				2	Հղում 1. Կետ 9	Փաստաթղթային՝ հաշվարկ	
5.	Կոնտեյներները տեղադրված են՝ բնակելի և հասարակական շենքերից ոչ պակաս, քան 15մ և ոչ ավելի, քան 100մ հեռավորության վրա: Նշում՝ 2				3	Հղում 1. Կետ 9	տեսողական	
6.	Կոնտեյներները աղբով լցված են ծավալի երկու երրորդից ոչ ավելի մակարդակով:				3	Հղում 1. Կետ 11	տեսողական	
7.	Կոնտեյներներից աղբը հեռացնելու ժամանակ մաքրվում և տեղափոխվում է կոնտեյներների հարակից տարածքի աղբը:				3	Հղում 1. Կետ 16	տեսողական	
8.	Աղբահանության ժամանակ տեղափոխում են նաև աղբակույտերը և տերևակույտերը:				3	Հղում 1. Կետ 16	տեսողական	
9.	Աղբակույտերը և տերևակույտերը չեն այրում:				3	Հղում 1. Կետ 16	տեսողական	

10.	Աղբանոթները տեղադրված են.					Հղում 1. Կետ 23	տեսողական	
10.1	մետրոյի, ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, ստորգետնյա անցումների, առևտուր իրականացնող օբյեկտների մուտքերի մոտ, կայարաններում				2			
10.2	հանգստի գոտիներում, լողափերում,				3			
10.3	զբոսայգիներում, պուրակներում,				2			
10.4	շուկաներում, տոնավաճառներում:				3			
11.	Աղբահավաք կոնտեյներները ախտահանում են համապատասխան ախտահանիչ լուծույթներով, աղբահավաք կոնտեյներների վաճույնը և ախտահանումը կատարվում է սահմանված կարգով: Նշում՝ 3				2	Հղում 1. Կետեր 14, 17, 18, 19	Տեսողական, հարցում	
12.	Աղբանոթների ախտահանումը կատարվում է սահմանված կարգով, ախտահանում են համապատասխան ախտահանիչ լուծույթներով, Նշում՝ 3				2	Հղում 1. Կետեր 18, 19	Տեսողական, հարցում	
13.	Աղբաթափման վայրում աղբատար փոխադրամիջոցների թափքերի ախտահանումը կատարվում է սահմանված կարգով՝ ախտահանում են համապատասխան ախտահանիչ լուծույթներով: Նշում՝ 3				2	Հղում 1. Կետեր 17,18	Տեսողական, հարցում	
14	Շենքերի աղբամուղների և աղբահավաք խցերի վաճույնը և ախտահանումը կատարվում է սահմանված կարգով, ախտահանում են համապատասխան ախտահանիչ լուծույթներով Նշում՝ 3				3	Հղում 1. Կետեր 18, 19	Տեսողական, հարցում	
15	Աղբատար փոխադրամիջոցների կառուցվածքը՝					Հղում 1. Կետ 13	տեսողական	
15.1	բացառում է (փակ թափքերով) շրջակա միջավայրի աղտոտումը,				2			
15.2	ապահովում է աղբի խտացումը,				1			
15.3	կոնտեյներները բեռնող հիդրավլիկ սարք,				1			
16.	Աղբանոթները ունեն.					Հղում 1. Կետ 22	տեսողական	
16.1	մաքրման և ախտահանման ենթակա հարթ մակերեսներ				1			
16.2	տեղափոխման համար ապամոնտաժման հնարավորություն:				1			

17.	Փողոցները, ճանապարհները ենթարկում են սանիտարական մաքրման:				3	Հղում 1. Կետ 24	տեսողական	
18.	Հրապարակները, ենթարկում են սանիտարական մաքրման:				2	Հղում 1. Կետ 24	տեսողական	
19.	Զբոսայգիները, պուրակները ենթարկում են սանիտարական մաքրման:				2	Հղում 1. Կետ 24	տեսողական	
20.	Ամռան ամիսներին փողոցները ենթարկվում են ջրման:				2	Հղում 1. Կետ 24	տեսողական	
21.	Տարածքների սանիտարական պահպանումը, սպառման թափոնների հավաքումը, պահպանումը, փոխադրումը իրականացնող անձնակազմի համար հատկացված են սանիտարակենցաղային սենքեր՝					Հղում 1. Կետ 38	տեսողական	
21.1	Հանդերձարան՝ հագուստի պահարաններով				2			
21.2	սանհանգույց,				1			
21.3	ցնցուղարան,				1			
22.	Աշխատակիցներն ապահովված են աշխատանքային արտահագուստի 2-ական լրակազմով,				3	Հղում 1. Կետ 39	տեսողական	
23.	Աշխատակիցներն ապահովված են ըստ աշխատանքի բնույթի՝ անձնական պաշտպանիչ միջոցներով՝					Հղում 1. Կետ 39	տեսողական	
23.1	ռետինե ձեռնոցներով,				2			
23.2	զոգնոցով,				1			
23.3	երկարաճիտ կոշիկներով				1			
23.4	ունիվերսալ դիմակներով կամ հակազագով,				1			
24	Ապահովված են անձնական հիգիենայի պարագաներով, այդ թվում՝					Հղում 1. Կետ 39	տեսողական	
24.1	Ապահովված են հեղուկ օճառով				3			
24.2	Ապահովված են անհատական սրբիչով				2			
25.	Աշխատակիցների համար ապահովված են առաջին բուժօգնության արկղիկով, որը պարունակում է առաջին բուժօգնության միջոցներ, հականեխիզներ, վիրակապական նյութեր, սպեղանի, թանգիֆ և շինաներ:				2	Հղում 1. Կետ 40		
26.	Անձնակազմը քիմիական միջոցների, ռեագենտների, նյութերի հետ կատարվող ամբողջ աշխատանքներն իրականացնում է լավ օդափոխվող և օդափոխիչ համակարգով ապահովված սենքերում:				2	Հղում 1. Կետ 41,	Տեսողական,	

27.	Անձնակազմը քիմիական միջոցների, ռեագենտների, նյութերի հետ կատարվող ամբողջ աշխատանքներն իրականացնելու ընթացքում կրում է հատուկ հագուստ, ռետինե ձեռնոցներ, հերմետիկ ակնոցներ, քառաշերտ մառայալից կարված հակափոշային կամ ունիվերսալ դիմակներ կամ հակագազ:				2	Հղում 1. Կետ 41,	Տեսողական, հարցում	
28	Աշխատանքային գործընթացի վնասակար գործոնների ազդեցությանը ենթարկվող աշխատողները արդյո՞ք ենթարկվել են պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննության: Նշում՝ 4				2	Հղում 1. Կետ 42, Հղում 2, կետ 4.1.4	փաստաթղթային	

Հղում 1. ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ. N25-Ն հրամանով հաստատված «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմեր,

Հղում 2. ՀՀ կառավարության 2004 թվականի հունիսի 15-ի «Արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող բնակչության առանձին խմբերի առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) ու պարբերական բժշկական զննության անցկացման կարգը, գործոնների, կատարվող աշխատանքների բնույթի, զննության ծավալի, բժշկական հակացուցումների ցանկերը և աշխատանքի պայմանների հիգիենիկ բնութագրման կարգը հաստատելու մասին» N 1089-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Նշում 1 - Կետ 2, Սպառման թափոնների հեռացում՝ առնվազն երեք օրը մեկ անգամ, իսկ +5°C և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ ամեն օր.

Նշում 2 - Կետեր՝ 3.1, 3.2, 3.3, 5.1, 5.2, Եթե կոնտեյնրների ձեռք բերումը, տեղադրումը և մակնշումը աղբահանության իրականացնող կազմակերպության պարտականությունն է, ապա ներկայացվում են համապատասխան պահանջները: Աղբահանության իրականացնող կազմակերպության պարտականությունների վերաբերյալ պետք է ներկայացվի համապատասխան փաստաթուղթ:

Նշում 3 - Կետեր՝ 11, 12, 13, 14, Աղբահավաք կոնտեյնրների, աղբանոթների, աղբատար փոխադրամիջոցների թափքերի ախտահանման համար օգտագործվում է քլորակրի (10 %), լիզոլի (5-8%) կրեոլինի (5-8%), նավթալիզոլի (10-15%), ֆենոլի (3-5%) նատրիում մետասիլիկատի (1-3%) կամ Հայաստանի Հանրապետության «Դեղերի մասին» օրենքով սահմանված կարգով գրանցված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման և արտահանման կարգը հաստատելու մասին» N 581 որոշմամբ սահմանված կարգով ներմուծված վարակազերծիչ միջոցներով, ըստ վերջիններիս ուղեկցող հրահանգների:

Կոնտեյնրների լվացումը և ախտահանումը իրականացվում է աղբավայրում, հատուկ հատկացված վայրում կամ համապատասխան

պայմանների (ջրամատակարարման և ջրահեռացման պայմաններ) առկայության դեպքում՝ աղբահավաք խցում:

Նշում 4 - Կետ 35, Նախնական բժշկական զննությունն անցկացվում է արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության հետ կապված աշխատանքի ընդունվելիս, որի նպատակն է հանձնարարվող աշխատանքներին աշխատողների առողջության համապատասխանության որոշումը: Նախնական բժշկական զննության ենթարկված յուրաքանչյուր անձի համար տրվում է վերջնական եզրակացություն՝ ելնելով նրա առողջության վիճակից, մասնագիտական պիտանիության մասին, իսկ այն անձանց, որոնց հակացուցված է վնասակար գործոնների առկայությամբ աշխատանքային պայմաններում աշխատելը, եզրակացությունը չի հանձնվում, այլ ուղեգիրը փոստով ուղարկվում է տվյալ կազմակերպության տնօրինությանը:

Պարբերական բժշկական զննության ենթակա են այն աշխատողները, ովքեր աշխատանքային գործունեության ընթացքում ենթարկվում են արտադրական միջավայրի և աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը: Պարտադիր պարբերական բժշկական զննության անցկացման նպատակն է աշխատողների առողջական վիճակի դինամիկ հսկողության միջոցով մասնագիտական հիվանդությունների կանխարգելումը: Կազմակերպության տնօրինությունը, յուրաքանչյուր 12 ամիսը մեկ անգամ, տեսչության մարմինների կողմից ստացված տվյալների հիման վրա մեկամսյա ժամկետում պատրաստում է պարբերական բժշկական զննության ենթակա աշխատողների ցուցակը՝ ըստ արտադրությունների, արտադրամասերի (տեղամասերի) անվանումների՝ նշելով համապատասխան արտադրական վնասակար և վտանգավոր գործոնները, որոնց ազդեցությանը ենթարկվում են աշխատողները:

Բժշկական կազմակերպությունը պարբերական բժշկական զննության ամփոփ արդյունքները՝ եզրափակիչ ակտով, 15-օրյա ժամկետում ներկայացնում է կազմակերպություն և տեսչություն: Մասնագիտական պիտանիության և առողջական վիճակի պատճառով ժամանակավոր կամ այլ մշտական աշխատանքի տեղափոխման մասին բժշկական եզրակացությունը կազմակերպության տնօրինության կողմից ենթակա է պարտադիր կատարման:

Տեսուչի ստորագրությունը _____

Տնտեսավարողի ստորագրությունը _____